ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾԱՆՈՒՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

Ամենայն Հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, վերջին ողջույն և օրհնություն ամենայն հայոց բանաստեղծ Ավետիք Իսահակյանին, որ բաժանվելով մեր աշխարհից, անցնում է խաղաղ ու անվրդով կյանքի մյուս ափին:

Այս բաժանումը խոր վիշտ է թողնում բոլոր սրտերում, որ բաբախում են Հայրենի երկրում և հայ Սփյուռքում:

Մեր ժողովուրդը կորցնում է իր մեծ զավակին, որ ավելի քան կես դար վառ պահեց ջանը մեր Ազգի ազնիվ հույզերի:

Հայ գրականությունը կորցնում է իր մեծատաղանդ Վարպետին, որ իր բովանդակ հոգին լույսի վերածած ընծա բերեց իր հարազատ ժողովրդին ու ամբողջ աշխարհին:

Կորցնում է նաև Մայր Աթոռը իր մեծ բարեկամին ու սիրեցյալ որդուն, որ մեր Ս. Էջմիածնի հազարամյա քարերի խորհուրդը սրտում, աղոթում էր վերածնված մեր Հայրենիքի կյանքի, արևի ու խաղաղ, ազատ վերելքի համար:

Վարպետը մեռավ, Վարպետը կապրի և պիտի ապրի հայ ժողովրդի հոգում ու կյանքում, բաշխվելով ամբողջապես մեզ բոլորիս և հետագա բոլոր սերունդներին: Եվ նա կմնա միշտ մեզ հետ, կլինի միշտ մերը՝ իբրև հերշընչման աղբյուր, իբրև լուսաշող փարոս:

Տիրոջ ողորմությամբ հանգի՛ստ իր հոգվույն, խաղաղությո՛ւն և լո՛ւյս, այժմ և հավիտյան:

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ